ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/40

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2021 թ. N 40

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ *ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2001, Տիգրան Մեծի 36*

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 10.10.2015թ.- 10.10.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հունվարի 15-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՎՊՀ կամ Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՎՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով Վանաձորի պետական համալսարանի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և համալսարանի ներկայացուցիչների հետ

հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 13 դեկտեմբերի 2018թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 28 հոկտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-12 դեկտեմբերի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 5 մարտի 2020թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 11 մայիսի 2020թ.

«Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համաձայն Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրի, ՎՊՀ-ի առաքելությամբ ձգտում է «ապահովել կայուն զարգացում, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն, պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ, ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար»:
ՎՊՀ-ն հաշվի առնելով նախորդ գնահատման խորհրդատվությունները, իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ մի շարք ոլորտներում:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն» և «Հետազոտություն և զարգացում»** չափանիշները գնահատվել են անբավարար:

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Ստանալով համալսարանի կարգավիճակ՝ ՎՊՀ-ն ընդլայնել է իր ՄԿԾ-ների շրջանակը: Մշակվել և ներդրվել են համալսարանական նոր կրթական ծրագրեր, որոնք ընդհանուր առմամբ համահունչ են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին: Միաժամանակ, բուհը շեշտադրում է կատարում մանկավարժական մասնագիտությունների վրա, քանի որ բուհը մշտապես ապահովել է մարզը այդ կադրերով: Ներկայումս նախատեսվում է զարգացնել բնագիտական և SS մասնագիտությունները՝ աշխատաշուկայում պահանջված լինելու նկատառումով: Վերջին հինգ տարիների ընթացքում ՎՊՀ-ում գործող բոլոր

մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայվել են բուհի Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված ներքին աուդիտի արդյունքում: Սակայն նշված լայնածավալ հետազոտության արդյունքում կատարված եզրակացությունները ընդհանրական են և ոչ թիրախային՝ վերհանված խնդիրների լուծման կամ ուղիների մատնանշման առումով:

Վերջին տարիներին բուհը ջանքեր է ներդրել և տեսանելի հաջողությունների հասել բուհի ռեսուրսների բարելավման և հարստացման ուղղությամբ:

ՎՊՀ-ն ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մեջ մեծ է ՄՈՒՀ-ի շրջանավարտների թիվը (134 անդամ), որոնցից գիտական աստիճան և կոչում ունեն 77-ը: Որպես ֆինանսական լծակ դասախոսական կազմը ստանում է հավելավճար, որը հիմնված է մասնագիտական ստաժի վրա:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը:*

ՎՊՀ-ն ընդհանուր առմամբ գիտակցում է իր առաքելությունը որպես համալսարան՝ հիմնական մարզային ուսումնական հաստատություն: Հանդիսանալով մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդը՝ բուհը դեռևս ունի ընդգծված մանկավարժական առաքելություն՝ ապահովելով մարզի մանկավարժական կադրերի մոտ 70%-ը:

ՎՊՀ-ն ունի ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման փորձ: Իրականացվել է նախորդ ռազմավարական ծրագրի գնահատում ըստ գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների՝ դրա արդյունքում սահմանելով նաև բուհի հետագա երեք տարիների համար նախատեսված միջնաժամկետ պլանավորում: Նոր ռազմավարական ծրագրի բացակայությունը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում ռեկտորի թափուր պաշտոնով:

Համալսարանը չի ապահովում արդյունքահեն կառավարում, կառավարման և վարչարարության ոլորտում անհրաժեշտ են անհապաղ բարեփոխումներ, առկա խնդիրներն իրենց ազդեցությունն են թողնում մյուս բոլոր ոլորտների վրա:

ՎՊՀ-ի նորանշանակ ղեկավարությունը գիտակցում է կառավարման համակարգի բարեփոխման կարևորությունը բուհի առջև ծառացած խնդիրների լուծման համար: Արդեն մշակվել է նոր ռազմավարական ծրագիրը, վերանայվում է բուհի կազմակերպական կառուցվածքը և համապատասխանեցվում է ռազմավարական նպատակներին:

Կառավարման համակարգը վերաձևավորման փուլում է և առկա են զարգացման միտումներ, կառավարումը միտված է որակի բարելավմանն ու որակավորումների արժանահավատ շնորհմանը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:*

ՎՊՀ-ում հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող հստակ ռազմավարություն չի իրականացվել: Կատարվել են միայն առանձին միջոցառումներ, մասնավորապես գիտաժողովներ, հետազոտական նախագծերի իրականացում: ՎՊՀ դասախոսների 2015-2018 թթ. միջազգային ընդհանուր հրապարակումների թիվը հասնում է 82-ի: ՊԴ կազմի հետազոտական ներուժը դեռ

պահպանում է մանկավարժական ուղղվածությունը: Չնայած դրան, բուհի ղեկավարությունը ներկայումս զարգացման հիմնական շեշտադրումը տանում է երկրում հետազոտական կենտրոն դառնալու ուղղությամբ, որը կընդգրկի ոչ միայն մանկավարժական, այլև ֆունդամենտալ գիտաճյուղեր:

Միջազգայնացման գործընթացը ՎՊՀ-ում հիմնականում իրականացվում է միայն արտաքին ֆինասավորման աղբյուրներ ունեցող ծրագրերի շրջանակներում, արտաքին կապերի հաստատումը խրախուսող հստակ քաղաքականություն և մշակված ընթացակարգեր առկա չեն:

4. Առկա թերացումներն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի կողմից ներկայացված ծրագիրը հիմնականում իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Ծրագրով պլանավորված բարեփոխումները, ամենայն հավանականությամբ, կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   ա) **«Կառավարում և վարչարարություն» և «Հետազոտություն և զարգացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի ցուցիչների չափելիության հստակեցման անհրաժեշտությունը,
   գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,
   գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   ա) առաքելության հստակեցմանը,
   բ) վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված հաշվետվությունների իրականացմանը,
   գ) արտաքին միջավայրի համակարգված վերլուծությունների իրականացման,
   դ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   ե) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

ե) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

զ)հետազոտական գերակայությունների վերհանմանը, միջազգայնացման ռազմավարության ձևավորմանը

4. Կազմակերպել ՎՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՎՊՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ., հունվարի 15
ք.Երևան